ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Շիրակի մարզի դատախազության դատախազ,
առաջին դասի խորհրդական

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում ազատազրկման հետ կապված առկա պատժատեսակների կատարալագործման հեռանկարներին: Հոդվածի շրջանակներում հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատազրկման հետ կապված պատժատեսակներից յուրաքանչյուրը, վեր են հանվել բացերը, թերությունները, և մատնանշվել կատարելագործման ուղղությունները: Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները՝ հեղինակի կողմից արվել են կոնկրետ առաջարկներ՝ առկա խնդիրների լուծման համար:

Հիմնարար բառեր- *պատիժ, պատժի համակարգ, պատժատեսակների կատարելագործում, ազատազրկում, կալանք, կարգապահական գումարտակում պահել, ցմահ ազատազրկում:*

Պատիժը քրեական քաղաքականության իրացման կարևորագույն ձևն է հանցագործությունների դեմ պայքարի գործում: Պատժի համաչափությունից, արդարացի կիրառումից կախված է քրեաիրավական հարկադրանքի կիրառման արդյունավետությունը, դրա խնդիրների ճիշտ իրականացումը, պատիժը հասարակության կողմից որպես արդարացի ընկալելը: Ինչպես իրավացիորեն նշվում է գրականության մեջ, նույնիսկ ըստ էության ճիշտ կայացված դատական որոշումը կորցնում է իր դաստիարակչական նշանակությունը, եթե այն չի ընկալվում որպես արդարացի[1]:

Այդ պատճառով պատժի տեսակների, պատժի համակարգի համալրման վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրությունը, զարգացող ու փոփոխվող հասարակական հարաբերություններին զուգահեռ դրանց կատարելագործումը, դառնում է անխուսափելի, հրատապ և անհրաժեշտ: Ընդ որում, կարևորագույն խնդիր է զերծ պահել քրեական քաղաքականությունը պատժի և՛ անհարկի խստացումից, և՛ դրա՝ չափից ավելի մեղմացումից, քանի որ երկու դեպքում էլ անխուսափելի են անցանկալի հետևանքները: Կարևոր խնդիր ենք համարում պատժի տեսակների, նպատակների և պատժի նշանակման հետ կապված առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ և՛ հայեցակարգային, և՛ մասնակի փոփոխությունները: Սույն հոդվածի շրջանակներում մեր կողմից կատարված ուսումնասիրությունը առավել համակարգված և ընդհանրացված կարելի է ներկայացնել հետևյալ ուղղություններով՝

1. պատժի տեսակների կատարելագործում և պատժի համակարգի համալրում,
2. պատժի տեսակների և չափերի որոշակի համամասնության ապահովում՝ քրեական օրենքով նախատեսված հոդվածների, կամ դրանց մասերի համալրման միջոցով,
3. դատական հայեցողության հնարավորինս սահմանափակում,
4. վերականգնողական արդարադատության տարրերի զարգացում:

Արդի ժամանակաշրջանում հաճախակի են դարձել ազատազրկման հետ կապված պատժատեսակների արդյունավետության խնդիրների վերաբերյալ քննարկումները:

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված են ազատազրկման հետ կապված հետևյալ պատժատեսակները՝ կալանքը, կարգապահական գումարտակում պահելը, որոշակի ժամկետով ազատազրկումը, ցմահ ազատազրկումը: Քննարկենք պատժատեսակներից յուրաքանչյուրը:

Կալանքը ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է (քր. օր. հոդվ. 57-ի առաջին մաս): Կալանքը կարճաժամկետ պատժի տեսակ է, և կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցա-

գործությունների համար՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել:

Դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրացած անչափահասների նկատմամբ կալանքը նշանակվում է տասնհինգ օրից մինչև երկու ամիս ժամկետով (հոդվ. 88): Դատարանի կողմից կալանք կարող է նշանակվել, եթե այն նախատեսված է քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (հոդվ. 64), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս (հոդվ. 77), հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքերում (հոդվ. 54):

Կալանքը կիրառվում է, երբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, այդ անձի նկատմամբ չի կիրառվել: Հակառակ դեպքում կալանքը՝ որպես պատժատեսակ, կդառնա անիմաստ:

Կալանքը կարող է կիրառվել առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձանց նկատմամբ: Այն, լինելով պատժի բավական արդյունավետ, շոկային էֆեկտ ապահովող միջոց՝ պրակտիկայում արդյունավետ չի իրագործվում: Դա, մեր կարծիքով, պայմանավորված է դրա ժամկետներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ, մշտապես նախատեսված լինելով երկընտրելի սանկցիաներում, հաճախ կրում է ձևական բնույթ: Կալանքն ունի մի շարք դրական կողմեր, որոնք առավել կարևորում են այս պատժատեսակի պրակտիկ կիրառման անհրաժեշտությունը: Այս պատժատեսակը, անձին զրկելով ազատությունից, ունենում է նրա վրա այն նույն հոգեբանական ազդեցությունը՝ ինչ ազատազրկման դեպքում, և պատժի խնդիրների իրագործման առումով ունի մեծ արդյունավետություն: Կարճատև բնույթի հետևանքով կալանքը հնարավորություն է տալիս հանցանք կատարած անձին արագ վերականգնվելու և ինտեգրվելու հասարակությանը՝ միաժամանակ զգալով քրեական պատժի ներգործությունը, ինչը ապահովում է հանցագործությունից զերծ մնալու մեծ հավանականություն: Բացի այդ, պատիժը կրելով խիստ մեկուսացման պայմաններում անձը չի շփվում հանցավոր բարքերի հետ և հետագայում գտնվելով ազատության մեջ, չի նպաստում դրա տարածմանը: Ուստի, այստեղ կարևորում ենք անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը այս պատժատեսակի կիրառման և դրա շոկային էֆեկտի ապահովման համար: Այդ առումով, մեր կարծիքով, պետք է վերանայել կալանքի ժամկետները՝ այն սահմանելով 10 օրից մինչև 2 ամիս, կալանքը որպես պատժատեսակ նախատեսելով առավել մեծ թվով հանցագործությունների համար: Այստեղ նշենք նաև, որ կալանքը որպես պատժատեսակ, հաջողությամբ կիրառվում է աշխարհի շատ երկրներում, մասնավորապես Իսպանիայում, Իտալիայում, Անգլիայում: Իսպանիայում օրինակ, կալանքը կիրառվում է միայն հանգստի օրերին, կալանքի նվազագույն ժամկետը մեկ հանգստյան օրն է, առավելագույնը՝ քսանչորս հանգստյան օրը: Մի շարք երկրներում կիրառվում է նաև տնային կալանքը՝ որպես պատժի տեսակ, ինչը նույնպես կարող է ներառվել մեր օրենսդրության մեջ որպես նոր պատժատեսակ: Մեր կարծիքով, այն բավական արդյունավետ կարող է գործել, քանի որ անձը պատիժը կրում է իր տանը՝ միաժամանակ ենթարկվելով որոշակի զրկանքների:

Քր. օր.-ի հոդվ. 58-ի առաջին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած ժամկետային ծառայության զինծառայողների նկատմամբ. կարգապահական գումարտակում պահելը երեք ամսից երեք տարի ժամկետով կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և դատապարտյալի անձնավորությունը, նպատակահարմար գտնի առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը նույն ժամկետով»:

Հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ երբ զինծառայողը դատապարտվում է ազատազրկման երեք տարուց ավելի ժամկետով, ապա այդ պատիժը այլևս չի կարելի փոխարինել կարգապահական գումարտակում պահելով: Դրանից միաժամանակ բխում է, որ զինծառայողին կարելի է այդ պատժին դատապարտել ինչպես որոշակի զինվորական հանցագործություն կատարելու, այնպես էլ այն դեպքում, երբ նա կատարում է այս կամ այն ընդհանուր քրեական հանցագործություն, օրինակ, անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս է պատճառում (քր. օր. հոդվ. 120):

Այս պատժատեսակը ազատազրկման փոխարեն չի կարող նշանակվել նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած անձանց նկատմամբ (քր. օր. հոդվ. 58-ի երկրորդ մաս): Դատապարտյալները, անկախ զինվորական կոչումից և նախկինում զբաղեցրած պաշտոնից, կարգապահական գու-

www.journal.lawinstitute.am

մարտակում պատժի կրման ընթացքում գտնվում են զինվորի կարգավիճակում և կրում են սահմանված նմուշի միատեսակ համազգեստ՝ առանց տարբերանշանների: Կարգապահական գումարտակում պատժի կրման ժամկետը զինվորական ծառայության ընդհանուր ժամկետի մեջ չի հաշվվում: Պատժի կրումն ավարտելուց հետո զինծառայողը վերադառնում է նախկին զորամաս՝ զինծառայությունը շարունակելու համար:

Կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողը պատիժը կրելուց ազատվում է այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինծառայության համար ոչ պիտանի (քր. օր. հոդվ. 79-ի չորրորդ մաս):

Կարգապահական գումարտակը ոչ թե ազատազրկման վայր կամ կալանավայր է, այլ հատուկ զորամաս. այդ պատճառով էլ այնտեղից դատապարտյալ զինվորների ինքնագլուխ հեռանալը կամ փախուստը պետք է որակել քր. օր. 361-րդ (Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը) կամ 362-րդ (Դասալքություն) հոդվածներով: Այն չպետք է որակել քր. օր. հոդվ. 355-ով (Փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից):

Նոր հանցագործություն կատարելու դեպքում անձը պատասխանատվության է ենթարկվում ընդհանուր հիմունքներով և պատիժը կրում է կալանավայրում, իսկ նախատեսված պատժաժամկետին պարտադիր կերպով ավելացվում է կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժի չկրած մասը՝ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը հաշվարկելով ազատազրկման մեկ օրվան համապատասխան:

Առաջարկում ենք օրենսդրական կարգավորման ենթարկել նաև այն իրավիճակները, երբ հանցագործությունների համակցության դեպքում նշանակվում է որոշակի ժամկետով ազատազրկում և կարգապահական գումարտակում պահել: Պրակտիկայում անձը ազատազրկվում է, իսկ կարգապահական գումարտակում պահելու ժամկետը գումարվում է ազատազրկման ժամկետին: Այդ մոտեցումը սխալ չհամարելով՝ գտնում ենք, որ դա նույնպես պետք է ստանա իր օրենսդրական ամրագրումը:

Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը կրած անձը համարվում է դատվածություն ունեցող անձ: Նրա ընտանիքը այդ ընթացքում զրկվում է այն արտոնություններից և առավելություններից, որոնք տրվում են զինծառայողների ընտանիքներին:

Այս պատժատեսակի ժամկետները, մեր կարծիքով, նույնպես ենթակա են վերանայման, քանի որ 3 տարին բավական երկար ժամանակ է կարգապահական գումարտակում պահելու համար, ինչը հաճախ անհնարին է դարձնում այդ անձանց ծառայության շարունակումը և վերաինտեգրումը բանակին: Ուստի գտնում ենք, որ կարգապահական գումարտակում պահելու ժամկետներ պետք է սահմանվեն մեկ ամսից մինչև մեկ տարի:

Ազատազրկումը, որպես պատժի տեսակ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով, համաձայն որի՝

1. Ազատազրկումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է:

2. Ազատազրկումը սահմանվում է երեք ամսից քսան տարի ժամկետով:

3. Անզգույշ հանցագործության համար ազատազրկումը չի կարող գերազանցել տասը տարին:

4. Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս ազատազրկման ժամկետները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում ազատազրկման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել քսանհինգ տարին, իսկ դատավճիռների համակցությամբ՝ երեսուն տարին:

Ազատազրկումն իր բովանդակությամբ պատիժների համակարգի առավել խիստ պատժատեսակն է, քանի որ այն զրկում է անձին իր հիմնարար իրավունքներից մեկից՝ ազատությունից: Ազատազրկումը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ պատժի այլ տեսակները չեն կարող ապահովել դատապարտյալի ուղղումը և պատժի մյուս նպատակների իրականացումը: Դատական պրակտիկայում այս պատժատեսակի կիրառումը այլ հիմնական պատժատեսակների համեմատությամբ բավականին տարածված է, և դա ինքնին մտահոգիչ է, քանի որ դրա համատարած կիրառումը հանգեցնում է հասարակության քրեականացմանը, նպաստում է հանցավոր բարքերի թափանցմանը հասարակության տարբեր շերտեր, քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության, պետության կողմից կատարվող մեծածավալ ծախսերի և այլն: Այս հանգամանքները կարևորում են այլընտրանքային և հակաազդեցության նոր միջոցների կիրառման անհրաժեշտությունը: Ներկայումս, որպես այլընտրանք, եվրոպական մի շարք երկրներում դի-

տարկվում է վերականգնողական արդարադատության անցնելը, քանի որ այն հանդիսանում է առավել ճկուն և արդյունավետ հակազդման միջոց հանցանգործությունների և սոցիալական այլ բացասական երևույթների դեմ պայքարի գործում: Վերականգնողական արդարադատությունը հեշտությամբ կարող է ներդրվել տարբեր երկրների իրավական համակարգում: Տարբեր պետություններում վերականգնողական արդարադատության առաքելությունն իրականացնում են պրոբացիոն ծառայությունները՝ ապահովելով պատժի նպատակների իրացումը, ազատազրկման փոխարեն անձին պահելով ազատության մեջ, հիմքում ունենալով անձի վերասոցիալականացումը, զուգահեռ լուծելով մի շարք խնդիրներ (հասարակության ապաքրեականացում, քրեակատարողական հիմնարկների բեռնաթափում և այլն): 2002 թվականին ՀՀ-ն վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, որով ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ բարեփոխումներ պետք է կատարվեին ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ քրեական արդարադատության բնագավառում: Այդ բարեփոխումների կարևորագույն տարրը ՀՀ Արդարադատության նախարարության կազմում պրոբացիոն ծառայության ձևավորումն է: «Պրոբացիա» բառը ինքնին նշանակում է փորձություն կամ փորձաշրջան, և դրա բնորոշման վերաբերյալ գրականության մեջ առկա են մի շարք սահմանումներ: Ընդհանրացված ձևով այն կարելի է ներկայացնել որպես պատժի տեսակ, երբ անձի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, կատարած հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը հաշվի առնելով՝ չի կիրառվում, նա ազատությունից չի զրկվում, դրա փոխարեն գտնվում է պրոբացիոն ծառայության հսկողության ներքո՝ հատուկ պայմանների առկայությամբ, համապատասխան աշխատանքներ իրականացնելով: Միևնույն ժամանակ կարևորում ենք այս բարեփոխումների մանրամասն պլանավորման, մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը՝ անցանկալի հետևանքներից խուսափելու նպատակով: Դա թույլ կտա պատժողական քաղաքականության ընթացքում շեշտը դնել ոչ թե պատժի խստության, այլ արդյունավետության վրա: Այստեղ մեր կարծիքը առավել հիմանվորելու համար հիշենք Չեզարե Բեկկարիայի հայտնի խոսքերն այն մասին, որ կարևոր է ոչ թե պատժի խստությունը, այլ դրա անխուսափելիությունը: Դրա վերաբերյալ Չ. Բեկարիան նաև գրում է. «Այն ժամանակներում և այն երկրներում, որտեղ եղել են ամենադաժան պատիժները, կատարվել են և ամենաարյունալի ու անմարդկային արարքները, որովհետև գազանային նույն այն ոգին, որն առաջնորդել է օրենսդրի ձեռքը, շարժել է նաև հայրասպանի և ավազակի ձեռքը»[2]: Որպես ազատազրկման այլընտրանք, պրոբացիայի ինստիտուտի ձևավորումը համարելով զարգացման հեռանկար՝ անդրադարձ կատարենք ազատազրկման վերաբերյալ մի շարք այլ հարցերի:

Դատարանի կողմից որոշակի ժամկետով ազատազրկումը, որպես կանոն, նշանակվում է այն հանցագործությունների համար, որոնք առավել վտանգավոր են և կատարվել են մեծ վտանգավորություն ներկայացնող անձանց կողմից, որոնց ուղղումը հնարավոր է միայն խիստ մեկուսացման պայմաններում՝ ուղղիչ ներգործության միջոցների կիրառմամբ: Դատարանի կողմից ազատազրկումը նշանակվում է բացառապես այն դեպքերում, երբ արարքը որակող հոդվածի սանկցիայում այն ուղղակիորեն նախատեսված է: Եթե հոդվածի սանկցիան, որով անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ, ազատազրկման հետ միաժամանակ նախատեսում է նաև այլ, ավելի մեղմ հիմնական պատժատեսակներ, ապա դատարանը դատավճիռ կայացնելիս նախ պետք է քննարկի դրանց կիրառման հնարավորությունը և ազատազրկում կարող է նշանակել այն դեպքում, երբ գտնի, որ տվյալ դատապարտյալին առավել նպատակահարմար է պատժիչ դաստիարակչական ներգործության ենթարկել միայն հասարակությունից մեկուսացման պայմաններում: Ազատազրկումը անխուսափելիորեն ուղեկցվում է ֆիզիկական զրկանքներով, սակայն դա չի նշանակում, որ ֆիզիկական զրկանք պատճառելը պատժի նպատակ է: Օրենքի այն ցուցումը, որ «պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը», նշանակում է, որ օրենքը չի ժխտում պատժի հետևանքով անձին ֆիզիկական տանջանքներ պատճառելու, նրա արժանապատվությունը ստորացնելու փաստը (այլապես կնշեր՝ պատիժը չի կարող ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը), բայց դա նպատակ չի համարում: Այսինքն՝ դա ոչ թե նպատակ է, այլ նպատակին հասնելու միջոց[3]: Դեռևս անցյալ դարի 70-

ականներին Ի.Գարելկինը իրավացիորեն փաստել է, որ պատիժը պատճառում է բարոյական զրկանքներ, ցանկացած պատիժ որևէ չափով քավական բովանդակություն ունի[4]:

Որոշակի ժամկետով ազատազրկում նշանակվում է նաև հանրային աշխատանքները կրելուց չարամտորեն խուսափող դատապարտյալների նկատմամբ:

Որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժատեսակի նշանակման հարցում դատական հայեցողության շրջանակները ներկայումս բավականին լայն են: Դատական հայեցողությունը սահմանափակելու նպատակով առաջարկում ենք հատուկ մասի բոլոր սանկցիաների համար մշակել ընդհանուր չափանիշ, որով հարաբերական որոշակի սանկցիաներում նվազագույն և առավելագույն շեմերը մոտեցնել միմյանց: Ինչ վերաբերում է երկընտրելի սանկցիաներին, ապա առաջարկում ենք դրանցում նախատեսել միայն երկու հիմնական պատժատեսակ: Դա հնարավոր կլինի իրականացնել հոդվածները հնարավորինս մանրամասնորեն կարգավորելով՝ դիսպոզիցիաները առավել մանրամասնորեն սահմանելով, նոր հոդվածներ, հոդվածների մասեր ավելացնելով: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարելի է տարանջատել ըստ ոլորտների (մասնավորապես իրավապահ համակարգում պաշտոնեական դիրքի չարաշահումը շատ ավելի մեծ հանրային վտանգավորություն ունի, քան, օրինակ, կրթական ոլորտում և այլն), շարժառիթից ելնելով (մասնավորապես շահադիտական դրդումներով պաշտոնեական դիրքի չարաշահումը ավելի մեծ հանրային վտանգավորություն ունի, քան անձնական այլ շահագրգռվածությամբ և այլն), 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը տարանջատել հատուցելի և անհատույց տեսակների, քանի որ թմրանյութի ապօրինի իրացումը շահույթ ստանալու նպատակով շատ ավելի մեծ հանրային վտանգավորություն ունի, քան թմրամոլի կողմից մեկ ուրիշ թմրամոլի թմրամիջոց հյուրասիրելը:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ բացառել հարաբերական որոշակի սանկցիաներում ստորին շեմը չնշելը, որը ներկայումս ենթադրում է նվազագույնը երեք ամսով ազատազրկում: Մեր կարծիքով ազատազրկման ստորին շեմ պետք է նախատեսվի մեկ տարին:

Առաջարկում ենք նաև պատիժը ծանրացնող երկու և ավելի հանգամանքների առկայության դեպքում օրենսդրական սահմանափակում նախատեսել՝ պատժաչափի որոշակի չափից ցածր պատիժ նշանակելու արգելք սահմանելով:

Դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու հետ կապված դատավճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և արդարացի: Այն պետք է հիմնված լինի գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության վրա՝ հաշվի առնելով հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործի անձը և գործի հանգամանքները, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Ազատազրկումն ուղեկցվում է դատապարտյալին իր սահմանադրական որոշ իրավունքներից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ (ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, աշխատանքի ազատ ընտրության, հանգստի, ընտրելու և ընտրվելու և այլն): Ազատազրկումը ենթադրում է նաև դատապարտյալի նկատմամբ ուղղիչ-աշխատանքային ներգործություն, որն իրականացվում է սոցիալ-հոգեբանական աշխատանքների միջոցով:

Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք պատիժը կրելուց հետո հիմնականում զուրկ են լինում նյութական միջոցներից, գտնվում են հանցավոր միջավայրի ազդեցության տակ, և մեծ է նրանց կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը: Այդ խնդրի լուծման համար կարևոր ենք համարում ազատազրկման վայրերից վերադարձած անձանց աշխատանքով ապահովումը, հատուկ հսկողության սահմանումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանվում է ամենախիստ պատժատեսակը՝ ցմահ ազատազրկումը, ըստ որի՝ այն դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Խորհրդային քրեական և ուղղիչ-աշխատանքային իրավունքի գիտության մեջ ցմահ ազատազրկման հիմնահարցը ոչ միայն չէր քննարկվում, այլև ընդհանրապես չէր դրվում: Ընդունված էր համարել, որ Խորհրդային Միությունում ազատազրկումը, ի տարբերություն կապիտալիստական երկրների, չի կարող լինել ցմահ կամ անժամկետ[5]:

«ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (18.04.2003թ.) 6-րդ հոդ-

վածի համաձայն՝ նախկին օրենսգրքով մահապատժի դատապարտված բոլոր անձանց պատիժը փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ, ինչը հետևանք էր Հայաստանի Հանրապետության՝ Եվրախորհուրդ ընդունվելիս ստանձնած պարտավորություններից մեկի՝ մահապատիժը վերացնելու հետ, որի կատարման արդյունքում ՀՀ գործող քրեական օրենսգիրքի պատիժների համակարգում մահապատիժը վերացվեց: Մահապատժի այլընտրանք է ցմահ ազատազրկումը, որը ՀՀ քր. օրենսգրքում առաջին անգամ է նախատեսվել որպես ինքնուրույն և հիմնական պատժատեսակ:

Ցմահ ազատազրկումը, ի տարբերություն որոշակի ժամկետով ազատազրկման, նշանակվում է անժամկետ: Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց կողմից պատիժը կրելու կարգը և պայմանները նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ: Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պահվում են այլ դատապարտյալներից առանձին: Նրանք պահվում են խցերում, որպես կանոն՝ յուրաքանչյուր խցում երկու դատապարտյալից ոչ ավելի:

Ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անչափահասները, հանցանք կատարելու կամ դատավճիռը կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք (քր. օր. հոդվ. 60-ի երկրորդ մաս):

ՀՀ քրեական օրենսդրության կարևորագույն առանձնահատկությունը բոլոր դատապարտյալների, այդ թվում՝ նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության սահմանումն է: Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա պատիժը հետագայում կրելու կարիք չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին (քր. օր հոդվ. 76-ի հինգերորդ մաս): Եթե ցմահ ազատազրկում կրող անձը նոր դիտավորյալ հանցանք է կատարում, որի համար նախատեսվում է ազատազրկում, ապա պայմանական վաղաժամկետ ազատման քսանամյա ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև նոր պատժի ժամկետը լրանալը (քր.օր. հոդվ. 76-ի յոթերորդ մաս):

Ցմահ ազատազրկման դատապարտված անձը, մտածելով, որ այլևս ոչինչ չունի կորցնելու, հաճախ դառնում է վտանգավոր, պատրաստ պատիժը կրելու ընթացքում կատարելու ցանկացած հանցագործություն: Այս խնդրի լուծման համար ՀՀ-ում ցմահ դատապարտման և այդ պատժատեսակի կիրառման պրակտիկայում, մեր կարծիքով, անհրաժեշտ են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես առաջարկում ենք հինգ տարի առանց որևէ խախտման պատիժը կրելուց հետո հնարավորություն տալ ցմահ ազատազրկման դատապարտված անձին իր ցանկությամբ աշխատելու և, օրինակ, 15 տարի անընդմեջ առանց խախտման աշխատելու դեպքում առաջնահերթության կարգով քննարկել նրան պատժի հետագա կրումից ազատելու հարցը: Կարևոր խնդիր է նաև ցմահ դատապարտված անձի կողմից պատիժը կրելու ընթացքում թույլ տված կարգապահական խախտումների համար այլ զրկանքների ենթարկելու հարցը: Օրինակ, որոշ երկրներում նախատեսում են դատապարյալին լուսավոր մենախցում տեղավորելը, այսինքն՝ մենախցում լույսը չի անջատվում նույնիսկ գիշերային ժամերին:

Քրեական իրավունքի գիտության մեջ վիճելի է ցմահ ազատազրկումը ինքնուրույն պատժատեսակ ճանաչելու հարցը: Այն վիճարկողները գտնում են, որ որոշակի ժամկետով ազատազրկման և ցմահ ազատազրկման միակ տարբերությունը դրանց տևողությունն է, ինչը չի կարող դրանք պատժի ինքնուրույն տեսակներ ճանաչելու հիմք լինել: Առավել ևս, որ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա հետագա պատիժը կրելու կարիք չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին: Այլ կերպ ասած, որոշակի պայմաններում ցմահ ազատազրկումը վերածվում է ժամկետային ազատազրկման, ուստի չի կարող ինքնուրույն պատժատեսակ համարվել:

Մեր կարծիքով, ցմահ ազատազրկումը որպես առանձին պատժատեսակ նախատեսելը ավելի ճիշտ է, քանի որ այն առավելագույն խիստ պատժատեսակ է, և դրա նախատեսման ու կիրառման նկատմամբ պետք է լինի առանձին ուշադրություն և մոտեցում: Երկրների մեծ մասում, որտեղ մահապատիժ չի նախատեսվում, ցմահ ազատազրկումը պատժի բացառիկ միջոց է: Այլ երկրներում ցմահ ազատազրկումը գոյություն ունի մահապատժի հետ մեկտեղ և օգտագործվում է որպես մահապատժի այլընտրանք, որը նշանակվում է դատական կամ ներման կարգով: Մահապատժի վերացման ուղղությամբ Եվրոպայում զգալի տեղաշարժեր կատարվեցին երկրորդ համաշխարհային պատերազմից

www.journal.lawinstitute.am

հետո՝ 1949թ., Եվրոպայի խորհրդի ձևավորմամբ և 1950թ. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի ընդունումով: Հայաստանը, ինչպես նշել ենք, միացել է այդ կոնվենցիային:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, կարող ենք փաստել, որ ՀՀ-ում գործող ազատազրկման հետ կապված պատժատեսակները կատարելագործման կարիք ունեն, և մեր կողմից արված առաջարկությունները կյանքի կոչելը կարող է նպաստել պատժողական քաղաքականության արդյունավետությանը:

[1] Տե՛ս Эскимов А.И. Справедливость и социалистическое право. Л., ЛГУ, 1980, С. 111.
[2] Տե՛ս Բաղդասարյան Ն. Ս. Ազատազրկված անձանց իրավական վիճակը. Ե., 1990., էջ 24:
[3] Տե՛ս Ուզունյան Մ. Ի. Պատիժ և դաստիարակություն. Ե., 1969. էջ 35:
[4] Տե՛ս Горелик И. И. Наказание и его назначение. Минск, 1978, С. 5.
[5] Տե՛ս Գրիգորյան Մ. «Քրեական իրավունք (ընդհ. մաս)», Ե., 2007թ. էջ 379:

Карен Оганисян
Прокурор прокуратуры Ширакской области РА

РЕЗЮМЕ

Перспективы совершенствования наказаний связанные с тюремным заключением в РА

В статье рассматриваются перспективы совершенствования наказаний связанные с тюремным заключением в РА. В рамках статьи автор рассматривает каждое наказание связанное с тюремным заключением предусмотренным Уголовным кодексом Армении, автор выявляет недостатки и указывает все направления совершенствования. Подводя итоги исследования автором были сделаны конкретные рекомендации для решения проблем существующих вопросов, совершенствования и улучшения наказаний связанные с тюремным заключением.

***Ключевые слова**: наказание, система наказания, совершенствование наказаний, лишение свободы, содержание под стражей, содержание в дисциплинарном батальоне, пожизненное заключение.*

Karen Hovhannisyan
Prosecutor of the prosecution office of the Shirak region

SUMMARY

The perspectives of the improvement of the custodial punishments in the Republic of Armenia

The article refers to the perspectives of the improvement of the custodial punishments in the Republic of Armenia. Within the article the author examined each of the custodial punishments by the Criminal Code of the Republic of Armenia. The gaps and deficiencies were highlighted and the possible ways of improvement were mentioned. Summarizing the article, the author made concrete proposals to solve the current problems.

***Keywords**: punishment, punishment system, improvement of punishments, imprisonment, detention, disciplinary battalion for a life sentence.*